# ԼՐՈՅ ԳԻՐ

## ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԱԹԱՅԻՆ ԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ — ՆՈՒՄԻՐԱ 31

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832 ՅՈՒՆԻՍԻ 21․ ՈՐ Է ١٢٤٨ ՍԷՖԷՐԻ ․

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ․


## ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

—

Մուհարրէմի ամսոյն 26 ին երկուշաբթի օրը ժամը 3 ին՝ 3 րոպէ անցած բարենշան ատենը՝ Ինքնակալին առջևը Սերասքէր փաշային ալ ներկայ գըտնըւած ժամանակը՝ նախ Արքային սըրքեադէսի Մուսթաֆա Նուրի էֆէնտիին՝ բդեշխութե մեծ աստիճանով Թըրըհալայի գաւառը շնորհեցաւ․

Ու ապա ֆերիգի աստիճանի խասսայի շահանէ պէկլէր պէկի Ահմէտ փաշային՝ նմանապէս բդեշխութե մեծ աստիճանով (միւշիրի աստիճանի խասսայի շահանէ) պատվոյ անունը շնորհեցաւ։

Ու Թէշրիֆաթճի էֆէնտիին կոչելովը՝ ասոնց փողպատը (եախան) կիւվէզ չուխայի վրայ ոսկեթել բանված լաճիվէրտ հարվանիներ հագուցին․ և Սերասքէր փաշայի ձեռամբ՝ բռլանդի քարերով շինված նշաններ պարգևեցաւ․

Ու (միւշիրի աստիճանի խասսայի շահանէ) Ահմէտ փաշային՝ իր առջի ունեցած ֆերիգի աստիճանի խասսայի շահանէ պէկլէր պէկլութե պաշտօնը՝ Արքային մապէյնճի գըտնըվող Բատօսլի զատէ Ահմէտ պէկին շնորհեցաւ։

Ու արքունի զօրաց երրորդ գնդապետ Նամիգ պէկ էֆէնտիին ալ՝ նոյն զօրաց երկրորդ գաւառապետութիւնը շնորհեցաւ։

Ու ասոնց ալ իրենց աստիճաններուն յատկացեալ փողպատը մավիի վրայ ոսկեթել բանված լաճիվէրտ հարվանիներ հագցընելով, նշաններ ալ պարգևեցաւ։ Յետոյ ամմէնն ալ զատ զատ Արքային առջևը յեր կիր խոնարհելով դուրս ելան․ և պատրաստ եղած մեծ ձիերը հեծնելով չիտակ Պախչէխափուն էկան։

Ու հոն տեղը սպասող հետևակ մանսուրէ զօրքերով և մուզիգաներով և կարգադրեալ հանդէսով երբ փաշային դուռը հասան, փաշային դռան մեծամեծները և պաշտօնատարները պինէկ թաշիէն դիմաւորելով՝ չիտակ արզ օտասին գացին։

Ու այս շնորհումներուն համար՝ յաւաջմանէ խըրկըված արքունի հրամանագիրը՝ քէհեա Պէկը կարդալէն յետոյ, սովորական կերպով արժանաւոր յարգումնին կարգաւ ՚ի գործ դըրվեցաւ․ և էտ դառնալու ատեննին ալ նմանապէս յարգութի ըրըվեցաւ․ և փաշային դուռը եղած մանսուրէ զօրքերն ալ կարգաւ կանգնելով,

ժը

թէ գալու և թէ գնալու ատեններին՝ մուզիգաներ չալեցին:

Նաև եպարքոսին տղայն իշխանաց իշխան Էմին փաշային՝ որ հիմա Յանեայի և Դէլվինեի և Աւլօնեայի գաւառներուն տեղապահ է, վերոյիշեալ արքունի հրամանագրին մէջը գրուած կերպովը՝ նոյն գաւառներուն տեղապահութիւնը վերստին հաստատելով՝ անոր ալ բդեշխութեան մեծ աստիճան շնորհեցաւ: Նաև անոր գալու քէհեաի եղող չավուշպաշի տղային ալ կապայ հագուցին:

Նաև ահա այն արքունի հրամանագրին օրինակն ալ այս տեղը տպուեցաւ:

---

## ՕՐԻՆԱԿ ԱՐՔՈՒՆԻ ՀՐԱՄԱՆԱԳԸՐԻՆ:

Գահամեծար փաշայ * Իմ թագաւորական յաւուր մերձաւորներէս սըրքեաթի-պի Մուստաֆա Նուրի էֆէնտին՝ իր բընական խոհեմութեամբ բդեշխութեան արժանաւոր ըլլալով, և բդեշխութեան գրանցուելու տեղը արքայական կանոնաց համեմատ շարժելով, ռայեաններու և հասարակութեան կողմանէ դէպ 'ի տէրութեան կողմը բարեմաղթութիւններ ընել տալը և երկրի շինութեան ջանք ընելը յուսացուելէն՝ այս անգամ թագաւորական բարի կամեցողութեամբ իրեն բդեշխութեան աստիճան շնորհելով չօրախ ըրի. և Թրըհալայի գաւառը՝ իր արժանաւորութեանը շնորհեցի:

Նաև ասիկէ 'ի զատ՝ Ֆէրիգի խասսա Ահմէտ փաշային՝ հիմա ձիաւոր և հետևակ արքունի զօրքերու մեծ զօրավար թէ և եղած է, բայց յաջողութեամբ յաւիտենականին կարգադրեալ զօրքերու օր ըստ օրէ շատնալուն՝ բարձրեալն ած դիւրութեամբ պարգևած ըլլալով, այսուհետև ուրիշ մէկ Ֆէրիգի խասսա մը դնել հարկաւոր ըլլալէն՝ այս պատճառով ամէնուն վրայն Ֆէրիգի աստիճանէն վեր մեծ զօրավարմը դնել պէտք եղաւ:

Ուստի վերոյիշեալ Ահմէտ փաշային թէ աղէկ կարգադրութեան կողմանէ՝ և թէ իմ թագաւորական գործքիս մէջը ունեցած ուղղութեան և հաւատարմութեան կողմանէ՝ ամէն կերպով արժանաւորութիւնը և ճարտարութիւնը յայտնի ըլլալով, նմանապէս անոր ալ բարի կամեցողութեամբ՝ այս անգամ նորէն բդեշխութեան աստիճանով (մուշիրի ասաքիրի խասսայի շահանէ) պատւոյ անունը շնորհեցի. և բոլոր յատկացեալ արքունի զօրքերու ալային և լիվային և Ֆերիգին վրայ՝ խիստ մեծ զօրավար համարուելուն համար՝ պաշտօնատար կացուցի:

Նաև նոյն Ահմէտ փաշային նախկին Ֆէրիգի խասսա պէկլէրպէկիութեան պաշտօնը՝ յառաջմանէ մանսուրէ զօրքերու մէջը միրալայութեան աստիճանը ունող՝ և այժմ արքունական մապէյնճիս գըտնըւող՝ Թահօլը զատէ Ահմէտ պէկին շնորհեցի: Նաև արքունի հետևակ զօրքերու երրորդ գընդապետ Նամիգ պէկն ալ՝ նոյն զօրքերու երկրորդ գաւառապետ կացուցի:

Նաև վերոյիշեալ բդեշխներուն և փաշաներուն այս ըրած արքայական շնորհումները՝ այս օրվան բարենշան ատենը Արքայական ներկայութեան՝ և Սէրասքէր փաշային ալ պատրաստ գտնըւած ատենը 'ի գործ դըրուեցաւ. անոր համար հարկ եղած ասոնց նշաններն ալ և հարվանիներն ալ պարգևելով, ամէնն ալ իմ արքունի փաշայի դուռը պիտի խըրկուին:

Ուստի երբ գալու ըլլան՝ մեծի տէրութեան սովորական կերպովը պատշաճ եղածները 'ի գործ դընելէն յետոյ՝ ամէն մէկին շնորհումին և պաշտօնատարութեանը պէտք եղած հրովարտակները գրել տաս:

Մանաւանդ որ՝ իմ եպարքոսը (սատրազամը) իր հրամանատարութեան մէջը ըրած մեծագործութիւնը՝ և տէրութեան յաջողութեան համար հետզհետէ ըրած բարի ջանքը և աշխատութիւնը՝ նոր 'ի նորոյ արքայական բարեհաճեցողութիւններս իրեն վրայ ալ աւելի ընել տալու պատճառ եղաւ:

Նաև անոր տղայն իշխանաց իշխան Էմին փաշային ալ՝ որ հիմա իր կողմանէ Յանեայի և Դէլվինեի և Աւլօնեայի գաւառներուն տեղապահ է, իր հօրը քաջութեան

հետևելով՝ այսուհետև Թագաւորական գործքերուս մէջը ասկեցալ օգտակար գործքեր յառաջ գալը կըյուսամ։

Եւ անցեալները Թագաւորեալ քաղաքըս երբոր եկաւ, անոր դէմքէն և շարժմունքներէն ալ խոհեմ ըլլալը իմացայ. անոր համար նոյն երեք գաւառին ինչպէս որ յառաջ տեղապահ էր, վերստին տեղապահութիւնը հաստատելով, արքայական գըթութեամբս իրեն ըղեշխութիւն պարգևեցի։

Եւ անոր գափու քէհեասին կափթան հագցնելով, թէ այս ողորմութիւնը և թէ Խըլըհալայի գաւառին շնորհումը՝ իմ եպարքոսին գրութեամբ իմացընես։

Արդ բարձրեալն Աստուած ամէննին ալ իրենց հրամանատարութեան գործոց մէջը՝ Թագաւորական կամացըս և մեր կրօնքին և մեծի տէրութեանս համեմատ աղէկ գործքեր ընելու յաջողութիւն տայ, ամէն։

---

Արքայական գթութեամբ Խըլըհալայի գաւառին ըղեշխութիւնը Մուստաֆա Նուրի փաշային շնորհեցաւ։ Եւ անոր այս կողմը պատահելու պիտանի գործքերը տեսնալու և կարգադրելու համար՝ մէկ գափու քէհեասի մը գտնըվիլը պէտք եղաւ։

Ուստի տէրութեան մեծամեծներէն նախկին արքունի Զարպխանէի նազըր սէյիտ ալի Րիզա էֆէնտին հրամանով Արքային՝ վերոյիշեալ ըղեշխին գափու քէհեասի գըրվելով, մուհարրէմի ամսոյն 29 ին հինգշաբթի օրը կափթան հագուցին։

---

Շէրիֆ Ապտիւլ Մութթալըպին արքայանիստ քաղաքէն իր հրամանատարութեան տեղը երթալը՝ 30 նումերոյով տըպված Լրոյ գրին մէջ յիշվեցաւ։ Նոյն շէրիֆին յառաջմանէ Պուրսայի մէջ նըստած ժամանակին՝ մեծի տէրութեան կողմանէ անոր կապված յաւէլ ապրուստը՝ այժմ ճանապարհին բաւական չըլլալուն համար, Ինքնակալն իր սովորական գթութեամբը նորէն բաւական ապրուստ կապեց։ Եւ Պուրսայի մէջ մնացող անոր ընտանեացը և մարդիկներուն ապրուստներուն համար ալ՝ զատ ամսական կարգեց։

Նմանապէս նախկին Բաղէլօնի ըղեշխ՝ այժմ Պուրսայի մէջ բնակող Դավուտ փաշային ապրուստի կողմանէ նեղութիւն քաշելը Ինքնակալն իմացաւ. և անոր վրայ ալ ողորմելով, իր պարագայովը հանգիստ ապրելուն համար՝ բաւական ապրուստ կապեց։

Արդ բարեխնամ Արքային՝ նոյն փաշային առջի ըրածներուն թողութիւն տալը՝ յիրաւի նմանը չըլլըված և չտեսնըված գթութիւնմը էր։ Հիմա անկէ ՚ի զատ՝ իր բնական գթութեամբը՝ անոր հանգիստ ապրելուն ալ կամեցաւ. ուստի վերոյիշեալ փաշային՝ այս իրեն եղած արքայական շնորհացը փոխարէն՝ յիրաւի ամէն կերպով շնորհակալ և բարեմաղթութիւններ ընելու պարտական է։

Նմանապէս ամէն հպատակ ծառայներն ալ՝ ասանկ գթած Ինքնակալին հովանաւորութեան ներքևը գտնըվելնուն յարգը գիտնալով, միշտ աղօթքներ ընելու պարտաւորութիւն ունին։

---

Այս անգամ շինվածքին կառավարումը հասած Խոդավըրօղ Թագաւորական պալատին մինա էմինի եղող Արքունի Զարպխանէին Սահիպայար Սայիտ էֆէնտին՝ թէ արքայական շինվածքին պաշտօնատարութեան մէջը ցոյց տըված հաւատարմութիւնը, և թէ ինքը գործունեայ և խոհեմ անձմը ըլլալով մինչև հիմա գտնըված գործքերուն մէջը՝ մանաւանդ Սահիպայարութեան գործքին մէջը ըրած աղէկ ջանքը և աշխատութիւնը յառաջմանէ գիտցըված էր. անոր համար Ինքնակալին կողմանէ անոր էլմաս նշանմը պարգևեցաւ։

---

Արքունի Զարպխանէին սաղ քէադիպ սէյիտ Իպրահիմ էֆէնտին՝ իր պաշտօնատարութեան մէջը մեծ ջանք ունէր. և ինքն ալ բնական խոհեմ և գիտուն անձմը ըլլալով, ամէն կերպով արքայական պարգևաց արժանաւոր էր. անոր համար՝ այս

անգամ արքայական գթութեան անոր ազգու-նի դիվանի խօճակեանութ պարգևելով, մուհարրէմի ամսոյն 23 ին ուրբաթ օրը՝ սովորական կերպով մալը հարվանի հագ-ցընելով, Հարեմիյէնի մուգաթաձիութէ աստիճանով Թագաւորական Բուռուս պար-գև եղաւ։

—

Մէհէմէտ Ալիին տղայն Իպրահիմը՝ Աքքային բերդը ինչպէս առնալը՝ ասկէց յառաջ տպված Լրոյ գրին մէջը յայտ-նի եղած էր։

Շամ քաղաքն ալ պատուական երկիր-ներէն ըլլալով, հոն տեղը պատերազմ ընե-լը իսկզբաննէ անոր մեծազօր տէրութիւնը արժան չէր համարած։

Ու այս բանին սոյգ ըլլալը՝ ասկէց ալ կըհաստատուի. որ յառաջմանէ մէկ քանի ինքը զինքը չըգիտցողներուն պատճառով նոյն քաղաքի մէջը մեռնող Սէլիմ փաշա-յին դիպուածքին՝ բարեխնամ Ինքնակալը գթութ աչօք նայելով, հոն տեղը եղող թէ յանցաւոր և թէ անմեղ բոլոր բնակիչնե-րուն մարդկային պակասութիւնները ներեց։

Ու հաճի Ալի փաշային պէս կարևոր և բարեխառն բնութ ունեցող մէկ բդեշխ մը հոն խրկելով, Շամի բդեշխ կացու-ցանելը բաւական համարեց։

Եգիպտոսի չարերուն Աքքայէն յե-տոյ՝ Շամին վրայ ձեռք երկնցնելնին՝ ա-սոնց իսկական չար դիտաւորութիւններուն ամէն կերպով տեղեակ եղողները՝ թէև գիտցածի պէս եղած էին, բայց այսու ամե-նայնիւ՝ Շամին պէս մէկ պատուական քա-ղաքը արիւն թափելու տեղ չըլլալը, երկ-րորդ՝ այն չարերուն խռովութեը և անոնց չար դիտաւորութեը որպիսութը բոլոր աշ-խարհի մարդիկներուն տարածվիլը, և ապա օգնութն և յաջողութն Տր զանոնք պատ-ժելը և պատուհասելը մտածելով, նոյն երկրի մէջը թէ պատերազմական հաստա-տութիւններ՝ և թէ պատերազմելու զօրքեր չէր դրված։ Ու այն ատենը որ նախա-յիշեալ չարը Աքքային մտաւ, յետոյ իր վերջին չար բաղձանքովը Շամն ալ մտնա-լու չար դիտաւորութեը հետևեցաւ։

Ու այս բանիս վրայ իր կատարելապէս չար ագահութիւնները՝ վերջը իրեն գլխուն գալու փորձանքը և պատուհասները մտա-ծել չըտալով, Աքքայի վրայ ունեցած բո-լոր չար մարդիկներովը ելեր՝ աներկիւղ Շամին վրայ գացեր է։

Ու Շամի բնակիչներն ալ իսկզբաննէ անոր իրենց երկիրին մէջը պատերազմական նախապատրաստութ չունենալով, և ամէն կողմանէ ալ բաց տեղմը ըլլալուն պատճա-ռով՝ բանմը ընելու կարող չեն եղեր։

Ու Շամի բդեշխն ալ պատերազմելու հրամանատար չըլլալով՝ ակամայ Շամը ձգելով դուրս ելլալը՝ այս անգամ եկած գրերէն յայտնըվեցաւ։

Ու նախայիշեալ չարերուն այս կերպով Շամին ալ ձեռք երկնցնելնին՝ յառաջմա-նէ իրենց հրատարակած սուտերուն հա-կառակը ըլլալով, ալ այսուհետև ասոնց չար դիտաւորութիւնները ինչ ըլլալուն՝ բոլոր մարդիկներուն կարծիք չմնաց։

Ուստի Տվ ալ արքունի քաջայաղթ բանա-կը օրըստօրէ յառաջ երթալով, Անատօ-լուի կողմին Եհամուր հրամանատար Հիւ-սէյին փաշայն՝ այս օրերս բոլոր արքունի և մանսուրէ զօրաց լիվաներուն և ալայնե-րուն հետ միանալով, այս մօտերը մէկ նա-խասահմանեալ ատենիմը մէջ բովանդակա-պէս ասոնց դէմ մէկ սաստիկ պատերազմ ըլլալը՝ աներկբայ կըյուսացվի։

Մերձապէս որ ժամանակ ըլլայ, այս-պիսի ապստամբներուն և չարերուն ժողո-վին ՚ի հարկէ չարաչար ջնջվիլը՝ շատ օրի-նակներով ամէնուն յայտնի և բացայայտ եղած է։

## ԳՈՐԾՈՑ ԶՕՐԱՑ

—

Անկէց յառաջ Բաբելոնի մէջ պաշտօնատարութ կեցող ձիաւոր մանսուրէ զօրքերուն՝ առաջին գունդին զօրավարը և զինուորները մէկ քանի տարի է 'ի վեր է որ հոն էին ։ Աստի քիչմը առէն հանդստանալնուն համար՝ իրենց երկիրը դառնալնուն Ինքնակալը հրաման ըրած էր . այն պատճառով գնդապետ աշըրը Ալի պէկն ալ Թագաւորեալ քաղաքը եկած է ։

—

Գնդապետ Րիզա պէկին կառավարութ ներքևը եղած ձիաւոր երրորդ գունդը՝ որ անկէց յառաջ Նիշէն արքայանիստ քաղաքը գալով, անոնց ձիերը չայրը խրրկըված էր ։ Հիմա նոյն գունդին դէպ 'ի Անատօլուի կողմը պաշտօնատարութ երթալուն՝ Ինքնակալը հրաման ըրաւ .

Աստի մէկ քանի օրվան մէջ իր պակսունքը հոգալու համար՝ արքայանիստ քաղաքը կեցընելով, և մէկ քանի օր ալ Իւսկիւտար մնալուն յետոյ՝ իր պաշտօնատարութեան տեղը երթալու վրայ է ։

—

Արքունի բերդերէն ամէն մէկ բերդին իր շինված դիրքին համեմատ Թնդանօթներ շարելով, նորէն Թօփճի զօրք գրված և կարգի դրրված է . և անոնց պէտք եղած ամսականներն ալ կապված է .

Եւ միջոց միջոց իրենց տեղերէն փոփոխակի ( նէօպէթով ) արքայանիստ քաղաքը բերվելով, անոնց կրթութը Սերասքեր փաշային յատուկ ջանք ընելու և նայելու համար՝ Արքային հրամանը եղած ըլլալը՝ անկէց յառաջ տըպված Լրոյ գրին մէջը յիշված էր ։

Աստի նոյն հրամանին կերպովը անոնց կրթութը համար՝ բերդին ռմբաձիգներէն ( Թօփճիներէն ) այս անգամ միայն 200 հոգի՝ և Նիկէպօլիի բերդին ռմբաձիգներէն 100 հոգի բերվելով, անոնց պէտք եղած կրթութը՝ Սերասքեր փաշային կարգադրութեամբը 'ի գործ դրվելու վրայ է ։

Եւ Շումլուի ռմբաձիգներէն ալ՝ այս բանիս համար 100 հոգի արքայանիստ քաղաքը գալու վրայ է ։

Ասա ալ՝ ասենք թէ Թօփ նետելու արհեստը և թէ անոր վերաբերեալ կրթութ գործքերը ուսանելնուն յետոյ՝ երբոր իրենց տեղը խրրկըվին , թէ նոյն բերդերուն մէջ մնացածներէն՝ և թէ ուրիշ բերդերուն կարգադրէլ ռմբաձիգներէն ալ փոփոխակի գունդ գունդ արքայանիստ քաղաքը կրթութ համար բերվելով, ողորմութբ բարձրեալին ամէնն ալ քիչ առէնի մէջ կրթըվելով ճարտարութ և վարպետութ ցոյց տալերնին կըյուսացվի ։

## ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

—

Անցեալ զիլհիճճէի ամսոյն 20 էն՝ մինչև 29, դարձեալ մուհարրեմի ամսոյն 8 էն՝ մինչև 22, թէ միրիի մուպաեաներէն և թէ բոյինձի վրայ վաճառեալ զահրէներէն ըլլալով՝ 45 նաւով արքունի ամբարը եկածներուն որքանութիւնն է ։

| Ցորէն՝ քիլէ | Գարի՝ քիլէ |
|---|---|
| ٩١٥٧٥ | ٣١٦٤١ |

Յիշեալ ժամանակներուն մէջը՝ արքունի ամբարէն տըրված զահրէներուն որքանութիւնն է ։

| Ցորէն Քիլէ | Գարի Քիլէ | |
|---|---|---|
| ٦ | | Ղալաթայու արքունի պալատին ։ |
| ٥ | ١٥ | Արքունի զօրաց Թայինաթին ։ |
| | ٢٤٨ | Եւս ձիաւոր զօրաց ձիերուն ։ |
| | ٢٨ | Մանսուրէ ձիաւոր զօրաց ձիե" ։ |
| ٢ | ٥ | Թօփխանայի Թայինաթին ։ |
| | ١ | Եւս ձիերուն ։ |
| ٨ | ٢ | Խումպարախանայի Թայինաթին ։ |
| ٩١١٥ | | Թէ խաս և թէ խարճի փուռնը ։ |
| ٧٦ | ٢ | Հացագործներուն ։ |
| ١ | | Միրիի ֆռանճէլաճիներուն ։ |
| ٩٤٥١٥ | ٢٨٤٨ | |

Յիշեալ ժամանակներուն մէջսը՝ Թէքիրտաղի, Պուրղազի, Իզնիմիտի, Էրէկլիի, Վառնայի, Մահալըճի, Սամսոնի, և Ալէլքլար ըսված նավահանգիստներէն՝ վաճառականի և նաւապետի

ապրանք ըլլալով, Ունկափանը եկածներուն որքանութիւնն է։

| Ցորեն՝ քիլէ | Գարի՝ քիլէ | Գօգօրօզ՝ քիլէ |
|---|---|---|
| ١٦٣٠٥ | ٧٠٥٢٠ | ٩١٨١ |

| Կորեկ՝ քիլէ | Ալիւր՝ քիլէ |
|---|---|
| ٦٠٢٠ | ١٢٣٤٥ |

Մուհարրէմի ամսոյն 7 էն մինչև 25՝ Եւրոպայի նաւերով ծովէն և թէ ցամաքէն եկածներէն ՚ի զատ՝ Ճերմակ ծովէն և սև ծովէն ծովեզերքէն և արքայանիստ քաղաքի քէօրֆէզին էթրաֆէն՝ տաճկի և ռայեաի նաւերով եկածները ներքևը գրուեցան։

| | |
|---|---|
| Բրինձ՝ օխա | 225300։ |
| Զէյթ եաղի՝ խանթար | 6241։ |
| Սապոն՝ խանթար | 1310։ |
| Աղ՝ քիլէ | 18000։ |
| Սուսամ՝ օխա | 6700։ |
| Փորթուգալ՝ հատ | 10000։ |
| Լիմոն՝ հատ | 213000։ |
| Մանաղի՝ եէտէկ | 1150։ |
| Պընտըխ՝ խանթար | 3700։ |
| Ֆասուլեայ՝ քիլէ | 2500։ |
| Պալ մոմի՝ օխա | 3000։ |
| Սէղ՝ ֆըչի | 190։ |
| Նարտէնկ՝ ֆըչի | 270։ |
| Հավկիթ՝ հատ | 1005000։ |
| Եուլաֆ՝ քիլէ | 2290։ |
| Պանիր՝ օխա | 55200։ |
| Փայտ՝ չէքի | 20385։ |
| Քէօմիւր՝ օխա | 507600։ |
| Քիրաճ՝ օխա | 615800։ |
| Թահին՝ օխա | 5600։ |
| Ենկինար՝ քիւֆէ | 190։ |
| Պախլայ՝ օխա | 170000։ |
| Զէյթին՝ օխա | 52000։ |
| Պէքմէզ՝ օխա | 26500։ |
| Քացախ՝ օխա | 7000։ |
| Խապախ՝ քիւֆէ | 455։ |
| Հաւ՝ խաֆէս | 79։ |
| Չէրվիշ եղ՝ եէտէկ | 40։ |
| Շէհրիյէ՝ սնտուկ | 55։ |
| Նօխուտ՝ քիլէ | 5350։ |
| Սօխ՝ օխա | 2300։ |
| Ենկինար՝ հատ | 22600։ |
| Խըյար՝ քիւֆէ | 84։ |
| Թիւթիւն՝ օխա | 10000։ |
| Սալոր՝ օխա | 3800։ |
| Սամոն՝ խանթար | 462։ |
| Չավտար՝ քիլէ | 4000։ |
| Թիւթիւն՝ տէնկ | 2297։ |
| Կէրպաս՝ տէնկ | 1722։ |
| Խամ բամպակ՝ օխա | 35152։ |
| Չամ քէօմիւրի՝ այար | 3940։ |
| Փուննա քէօմիւրի՝ այար | 3670։ |
| Խամ լըէչ՝ օխա | 900։ |
| Քիւլիւչէ ոսկի՝ օխա | 100։ |
| Եւրոպայի նաւերով եկած բրինձը՝ չէնպիւ | 367։ |

## ԳՈՐԾՔ ԱՐՏԱՔԻՆ

Մալթայի կողմանէ եկած լուրերուն կերպովը՝ երկու տարի յառաջ ելլող Կարոլոս ըսուած Ֆրանսայի Թագաւորին կողմնակամները՝ յիշեալ Թըվէն երկու օր յառաջ Մարսիլեայի մէջը՝ նոյն Թագաւորին ազգատոհմին յատկացեալ Ճերմակ դրօշակը բանալով գունդ մը մարդիկ ապստամբեցին։ Ասոր համար նոյն քաղաքի մէջ պատահած աղաղակը և վրդովմունքը՝ մինչև վերյիշեալ Թըվին դադարված չէր։

Սոյն նախայիշեալ ապստամբները իրենց չար դիտաւորութիւնները ՚ի գործ դնելու միտօք, Պաղմիրիէրէ ըսուած Ֆրանսայի մեծ փոխանորդը Գօլէրա ցաւէն մեռած ըլլալով ելլող Թագաւորին հինգերորդ Հանրի ըսուած Թօռը այժմ Ֆրանսայի Թագաւոր պիտի ըլլայ ըսելով, և Պէրիտուքէսի կոչուած անոր մայրն ալ վախուը նաւով մը Փարէզ եկած է ծանուցանելով, նոյն քաղաքի մէջը այս խօսքերը հրատարակեր էին. սակայն վերջը այն լուրերուն յայտնի սուտ ըլլալը հաստատուեցաւ. և քանի մը մարդ բանտը դրուելէն յետոյ՝ խաղաղութիւն եղաւ։

Նաև նոյն քաղաքի բնակիչներուն շա- տին՝ և ազգային պահապան զօրաց՝ և բոլոր կարգադրեալ զօրքերուն կողմանէ երևցած հաւատարմութիւնը՝ այսուհետև ալ հասարա- կութեան միշտ այնպէս խաղաղութեը յայտնի օրինակ եղած է։

—

Մարսէյլեայի Բրէշէօր՝ ապրիլ 13 ին, այ- սինքն՝ խռովութեան պատահած օրը՝ Մարսէյլեայինէ- րուն դէմ այս յայտարար թուղթը հրատարակեց։

ՕՐԻՆԱԿ ՅԱՅՏԱՐԱՐ ԹՂԹՈՅՆ.

Ով մարսիլեացիք՝ մէկ քանի խելագար խռովարար մարդիկները՝ այս առաւօտ ա- պստամբութիւն և խռովութիւն ձգելու յանդգնեցան։

Նաև անկարգ շարժմունքնին չարերուն և ապստամբներուն առանց զօրութե և կա- րողութե ըլլալով, ազգային պահապան զօրաց և կարգադրեալ զօրքերուն անձերնին չը- խնայելով ծառայութե հետևելնին՝ և երկ- րի բոլոր ժողովրդոց բարի դիտաւորու- թիւնին հաստատելէն ՚ի զատ՝ ուրիշ բան մը չը կարացին ընել։

Նաև դատաստանական գործոց վերաբե- րեալ մեծամեծ պաշտօնատարներն ալ՝ այն խռովարար ապստամբներուն ժողովը պատ- ժելու համար՝ քննելէն և որոնելէն պա- րապ չէին։

Նաև սասնկ մէկ հանդստութե ժա- մանակին ներքին խռովութե և ապստամբու- թեան որոմները ցանելու յանդգնողնե- րուն՝ արժանաւոր պատիժնին կանոնին կերպով ՚ի գործ դրվիլը յայտնի է։

Նաև հասարակութե խաղաղութիւը ավրելու համար գաղտնի չարութե որոգայթ լարող ապստամբներուն գործքը՝ քաղաքիս դա- տաւորները և զօրավարները խոհեմաբար յայտնելով, խափանելու կարող ըլլալնին ամէնքդ ալ գիտէք։

Ապա ձեր սովորական գործքին ապա- հովութե հետևելով, օխակալ չարագործ- ներուն դրդելը՝ և խռովութի ձգելը վեր- ցնելու հետևեցէք։

Մեր արքային պաշտպանութե ներքևը եղող քաղաքացիներէն՝ մեր տէրութե կա- նոններուն կատարեալ հնազանդողներուն ամէն մէկը կերպ կերպ հանգստութե և ան- դորրութե մէջ կըմնան։

Մեր արքային դատաստանական վճռոյ հրամանը միայն չարագործներուն համար ըլլալը՝ ամէնքդ ալ խմացէք։

Ասկէն օրը ազգային պահապան զօրքը և կարգադրեալ զօրքերը մէկ տեղ ժողվե- լով, իրենց արժանի եղած կերպովը՝ շնոր- հակալութեան և ցնծութեան նշանները ցիտի երևէին։

Մեծ Ֆրանսայի արքայն ողջ ըլլայ ըսելով՝ խօսքը կատարվեցաւ։

Ինչպէս [illegible] ամսոյն, այսինքն՝ մայ- իսի 22 [illegible] և [illegible] եկած [illegible] մէկ քանի լուրե- րուն համառօտ թարգմանութիւնն է։

—

Նէմցէի և Անկղիթերայի և Ֆրանսայի և Պրուսիոյ և Ռուսիոյ տէրութիւնները՝ Ֆիլէ- մէնկի և Պէլճիգայի երկիրներուն մէկ զմէ- կէ բաժնըվելուն, և Պէլճիգայի երկիրը այսուհետև ինքնագլուխ և համարձակ տէ- րութիւն համարելուն համար՝ յամի տն 1831 նոյեմբերի 3 ին՝ Լօնտրայի մէջը իրենց ե- րեսփոխաններուն միջնորդութեը հաստատ- ված պայմանագրին վկայականները՝ այս ան- գամ՝ ամէնքն ալ փոփոխակի տալու վրայ թէ և եղած էին. սակայն Անկղիթերայի և Ֆրանսայի տէրութիւնները ամենևին որոշ պայմանմը չդնելով՝ նոյն պայմանա- գիրը բոլոր պարագայովը ճշմարտեր և ըն- դուներ են։

Նէմցէի և Պրուսիոյ տէրութիւնները մէկ տեղ՝ Ալմանեայի միաբանեալ ժողովոյն մասը համարված ըլլալով, Ֆիլէմէնկի և Պէլճիգայի մէջ տիրելու կերպին վրայ կամք պատճառ եղած Լիւքսէնպուրկի տու- գայութեը երկրի խնդրոյն համար՝ մէկ

քանի որոշակի կանոններ առաջարկելով յայտներ են։

Ու Ռուսի տէրութեը նոյն պայմանագիրը ընդունելու վրայ մէկ քանի պատահած որոշակի առաջարկութիւններէն ՚ի զատ՝ Ցիլէմէնկի արքային վրայ ստիպմամբ գործքեր ընելով, ամենևին հաւանութիւն չըտալը՝ բացարձակ յայտներ և իմացուցեր են։

---

Յամ թւն 1832 յունվարի 18 ին՝ Ռուսի կայսեր կողմանէ Բեթերսբուրկի մէջ ստորագրըուած, և նոյն Բըլլին ապրիլի 22 ին՝ անոր երեսփոխանին ձեռօքը Լոնտրայի մէջ փոփոխանէ տըրըված նոր վճռաշինին օրինակն է։

---

Մենք առաջին Նիկողայոս Ռուսի բոլոր երկիրներուն կայսր և Լեհի Թագաւոր ենք, ամենուն կըյայտնենք. որ մէկ կողմանէ մեր և Նեմցէի կայսեր և Ֆրանսայի և Ինկիլթերայի և Պրուսիոյ Թագաւորներուն՝ և միւս կողմանէ ալ Պելճիգայի Թագաւորին՝ Լոնտրայի մէջ խօսակցութեան ժողովին պաշտօնատար եղող երեսփոխաններնիս ընկերութեամբ և մեր ամենուն հաւանութեամբ և միաբանութեամբ յամի թւն 1831 և Նոյեմբերի 3 ին՝ նոյն քաղաքի մէջը մէկ պայմանագիրմը հաստատելով ստորագրեր են. և այս կողմը նոյն պայմանագրին օրինակը բառ առ բառ գրված է։

Ուստի նոյն պայմանագրին նուրբ հայեցողութեամբ մտածելէն յետոյ՝ իններորդ և երկոտասաներորդ և երեքտասաներորդ նիւթաւոր բաներուն վերաբերեալ՝ Ցիլէմէնկի և Պէլճիգայի մէջը մէկ հաստատ համեմատութեամբ վախճան տըրվելու՝ հաւասարելու և ուղղելու գործքերը որոշ ըլլալու պայմանով, կատարելապէս ընդուներ ենք. Անոր համար նոյն պայմանագրին վերի կողմը որոշակի գրվածէն ՚ի զատ՝ ուրիշ կապված պայմանները և նիւթաւոր բաները ամենն ալ՝ թէ մեր կողմանէ և թէ մեր յաջորդներուն կողմանէ բոլոր ավըրվելու պատճառներէն պահպանվելով, յարգի բըռնըվելը՝ ահա մեր կայսերական ուխտ և դաշինքովը՝ հաստատեր ենք։

Ուստի այս կայսերական վկայականը մեր ձեռօքը ստորագրվելով, մեր կայսերական կնքովը կնքըվելու համար պատվիրեր ենք։

---

Ամիս ու կէսէն ՚ի վեր է՝ որ Փարէզի մէջ Գոլէռայ ցաւէն 25000 հոգի մեռեր է. և հիմա մէկ օրվան մէջ՝ նոյն ցաւէն մեռնօղներուն թիվը՝ 50 հոգիէն աւելի եղած չէ. սակայն նոյն ցաւը Ֆրանսայի ուրիշ նահանգներն ալ տարածվեր է. և առհասարակ ամենուն մէջը վախմը ձըգելով, շատ վնասներու պատճառ եղեր է։

Ու Փարէզի մէջը Գոլէռայէն շատ երևելիներ և մեծամեծներ մեռեր են. մանաւանդ Գազիմիրփէրիէ ըսված Ֆրանսայի մեծ փոխանորդը մեռած է. և անոր տեղը Մօնթալիվէ ըսված ներքին կառավարութեանց փոխանորդը դըրվեր է։

Ինկիլթերայի տէրութեն Կըրէյի ըսված մեծ փոխանորդն ալ՝ իր հետը եղող ուրիշ փոխանորդներով մէկ տեղ քանի մը պատահած պատճառներու համար՝ հինգ վեց օր յառաջ հրաժարական թուղթեր թէև մատուցեր են. բայց Ինկիլթերայի Թագաւորը մէկ քանի բաներ մտածելով, անոնց հրաժարիլը չէ ընդուներ. և զանոնք առաջինին պէս իրենց պաշտօնատարութեան տեղը կացուցանելը Նախայիշեալ Գազէթաներուն մէջը գըրված է։